3.qxd 15/02/2026 17:54 Page 1


# ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 16 փետրվարի 2026թ. թիվ 3 (632)


## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՎՈ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ



Փետրվարի 6-ին Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի մշակույթի տան տարածքում հանդիսավորությամբ բացվեց Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի Պատվո հյուպատոսությունը:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կորնել Իոնեսկին, ՀՀ Վարչապետի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունցը, ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, գործարար շրջանակների, կրթության ոլորտի ներկայացուցիչներ, արվեստի եւ մշակույթի գործիչներ:

Հյուպատոսության սենյակի բացման ժապավենը կտրելու իրավունքը վերապահվեց Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կորնել Իոնեսկիին եւ Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի Պատվո հյուպատոսության հյուպատոս Արման Անդրիկյանին:

Այնուհետ հնչեցին Հայաստանի եւ Ռումինիայի պետական օրհներգերը:

Գավառում Ռումինիայի Պատվո հյուպատոսության բացման առիթով առաջինը ողջույնի եւ շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կորնել Իոնեսկին, հավաստիացնելով, որ այս քայլով ավելի են խորանալու եւ զարգանալու հայ-ռումինական բարեկամական կապերը, որոնք ունեն դարերի պատմություն:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն էլ Պատվո հյուպատոսության բացումը համարեց շատ կարեւոր, նշանակալի իրադարձություն այն առումով, որ Գեղարքունիքի մարզի պատմության մեջ առաջին անգամ Պատվո հյուպատոսություն է գործելու:

-Մեզ համար այս օրը շատ կարեւոր ու նշանալի օր է, քանի որ Գեղարքունիքի մարզի պատմության մեջ առաջին անգամ է, որ Պատվո հյուպատոսության գրասենյակ է բացվում: Եվ ես վստահ եմ, որ Գավառում Ռումինայի հյուպատոսության գրասենյակը ծառայելու է երկու բարեկամ ժողովուրդների միջեւ եղած կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, ինչպես նաեւ՝ նոր կապերի ստեղծմանը, որը գործընկեր կառույցների կողմից արդեն նախատեսված է նաեւ տեղական ինքնակառավարման մակարդակում, համագործակցության հուշագրի ստորագրմամբ, ինչի արդյունքում զարկ կտրվի ապակենտրոնացված համագործունկցության ծրագրերի ներդրմանն ու իրականացմանը,-նշեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

Իր ողջույնի եւ շնորհավորանքի խոսքում ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը եւս հյուպատոսության բացումը համարեց չափազանց կարեւոր քայլ հայ-ռումինական հարաբերությունների հետագա զարգացման ու խորացման գործում:

-Հայ-ռումինական կապերն ունեն դարերի պատմություն, որոնք իրենց բովանդակությամբ եղել են միայն բարեկամական: Բացի այդ, Ռումինիան Հայաստանի համար կարեւոր գործընկեր է Եվրոպական ու Սեւծովյան համագործակցության երկրների հարթակներում: Իսկ Ռումինիայի հայ համայնքի ակտիվ ներգրավվածությունը երկրի կյանքում խոսում է մեր երկու ժողովուրդների անխախտ բարեկամական կապերի հետագա զարգացման ներուժի մասին, որը նոր, տեսանելի ընթացք կստանա այս հյուպատոսության գործունեության արդյունքում,- նշեց Սարգիս Խանդանյանը:

Ելույթներով հանդես եկան նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ Պատվո հյուպատոս Արման Անդրիկյանը:

-Գավառ քաղաքում Պատվո հյուպատոսարանի գործունեությունը նպատակ ունի՝ նպաստելու երկկողմ հարաբերությունների զարգացմանը տնտեսական, մշակութային, կրթական ու մարդասիրական ոլորտներում: Հավատացած եմ, որ մեր հյուպատոսարանը կդառնա ակտիվ երկխոսության, նոր նախաձեռնությունների ու արդյունավետ գործընկերության կենտրոն՝ ի նպաստ հայ եւ ռումին ժողովուրդների բարեկեցության եւ զարգացման,- նշեց Արման Անդրիկյանը:

**Խոսրով Խլղաթյան**

### ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿԱՑ

*Գրկել են նրանք շիրիմները մութ*
*Կյանքի վայելքի շողի փոխարեն,*
*Ու տարածվում է լռություն մի բիրտ,*
*Մի խնկարկելի, նենգ ունայնություն:*
*Վեհ էին նրանք, քաջ ու անվեհեր,*
*Երբ ելնում էին գոռ , ահեղ մարտի,*
*Ճախրում թշնամուց միշտ վեր ու հզոր,*
*Հաղթանակ կռում՝ այնքան բաղձալի:*
*Սուրբ էին նրանք, անկեղծ ու բարի,*
*Երդվյալ զինվոր Հայ հին հայրենյաց,*
*Հրի ու սրի, արնախումների*
*Բանակների դեմ զինավառ կանգնած:*
*Մարտնչում էին նրանք անդադրում*
*Հանուն վառվռուն, տաք գարունների,*
*Կյանքերը դրած զոհասեղանին,*
*Որ հայը չապրի որբ ու Անտունի:*
*Հանգան նրանք լուռ կամ հառաչանքով,*
*Երազի ծվատ փեշերին կառչած,*
*Գնացին երկինք՝ այս կյանքին ծարավ,*
*Բայց հպարտորեն եւ ազատաբաղձ:*
*...Ու բանակվել են նրանք երկնքում,*
*Մեր հոգիներում՝ ցավից հրդեհվող,*
*Դարերում կանգուն հուշարձաններին,*
*Հայկականության օդում փոթորկվող:*
*Կանչում են նրանք մեզ՝ ապրողներիս,*
*Չարի դեմ ցասման հաղթահանդեսի,*
*Բռնկվում որպես արեգական լույս,*
*Որպես ոգեղեն ճամփա Գալիքի:*

**Խոսրով Խլղաթյան**

## ԿԱՅԱՑԱՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ



Փետրվարի 11-ին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը պատասխանեց լրագրողների հարցերին: Մամուլի ասուլիսին մասնակցեցին հանրապետական ու տեղական մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում մարզպետ Կարեն Սարգսյանն անդրադարձավ Գեղարքունիքի մարզի ֆինանսական, կրթության, մշակույթի եւ սպորտի, առողջապահության եւ սոցիալական ապահովության, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտներում 2025 թվականին արձանագրված ձեռքբերումներին:

Կարեն Սարգսյանի ներկայացմամբ՝ 2025 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ու պետական այլ ծրագրերի շրջանակներում Գեղարքունիքի մարզում գործել է 328 շինհրապարակ՝ շուրջ 43 միլիարդ դրամի կապիտալ ներդրումների հաշվին, որի արդյունքում հիմնանորոգվել կամ միջին նորոգման է ենթարկվել միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության 128 կիլոմետր ճանապարհի, 84069 գծամետր խմելու ջրագիծ, 50025 գծամետր ոռոգման ցանց, 50768 գծամետր լուսավորության ցանց եւ 4954 գծամետր գազատար:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

## ԱՎԵՐԱԿ, ԲԱՅՑ ՇՔԵՂԱՇՈՒՔ ՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՄՇԻ ՎԱՆՔԸ

/սկիզբը՝ նախորդ համարներում/



### ԽԱՄՇԻ ՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐ- ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԸ ԵՎ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի բարձրարվեստ քանդակագործությունը եւ ճարտարապետությունը, Խամշի վանքը չափազանց հարուստ է նաեւ շքեղ խաչքարերով ու տապանաքարերով եւ վիմագիր արձանագրություններով: Այստեղ պեղումներով հայտնաբերված խաչքարերի թիվն անցնում է հարյուրից: Որոշ խաչքարեր ագուցված են պատերի մեջ, որոշ խաչքարեր էլ կանգնած կամ ընկած վիճակում են, որոնք դրվել են որպես հանգուցյալների հիշատակը հավերժող կոթողներ: Ձեռակերտ այդ հրաշալիքները հանդիսանում են հայկական խաչքարագործության գլուխգործոցներ, որոնց վրայի նրբին քանդակներն ու նախշերը պարզապես ցնցում են իրենց գեղեցկությամբ՝ լիովին համապատասխանելով վանական ողջ համալիրի վեհաշուք միջավայրին:

Որոշ խաչքարեր իրենց շքեղությամբ պարզապես ասեղնագործ աշխատանքի են նմանվում:

Երեւելի են գավթի պեղումների ժամանակ հայտնաբերված ու կառույցի որմին ագուցված Հայր Զաքարի անվանակիր զույգ խաչքարերը, որոնք կերտված են տեղական կրաքարից եւ ունեն նույն չափսերը: Խաչքարերից առանձնանում են Վասակ իշխանի եւ Պողոս «պատվական» քահանայի հիշատակին նվիրված խաչքարերը, որոնք կերտվել են 13-րդ դարում:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

3.qxd 15/02/2026 17:54 Page 2



## ԿԱՅԱՑԱՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Ասֆալտապատվել եւ սալիկապատվել է է 6500 գծամետր համայնքային նշանակության փողոցներ ու մայթեր, այդ թվում՝ 9079 ք/մ շենքերի բակեր, սալարկվել է 6958 ք/մ համայնքային նշանակության փողոցներ եւ մայթեր: Հիմնանորոգվել են 8 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ՝ 5581 ք/մ ընդհանուր մակերեսով, տեղադրվել է շատրվանային համակարգ, կառուցվել է մեկ հանդիսության սրահ, ինչպես նաեւ վերանորոգվել է մեկ մշակութային կենտրոն եւ համայնքային նշանակության շենք: Մի քանի տասնակի հասնող ծրագրեր էլ մնում են ժամկետների մեջ՝ տեղափոխվելով 2026 թվական:

Դպրոցաշինության ոլորտում իրականացվել է 67 ծրագիր՝ կառուցման կամ վերանորոգման տեսքով: ՀՀ Կառավարության «Մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում այս պահին կառուցվում են Երանոսի թիվ 2, Ծովինարի, Ներքին Գետաշենի թիվ 1, Գեղհովիտի թիվ 2, Շատջրեքի միջնակարգ, Գավառի թիվ 5 Ճամբարակի թիվ 1, Լեռնակերտի հիմնական դպրոցները:

Հիմնանորոգվող կամ վերանորոգվող 11 դպրոցներից Վաղաշենի միջնակարգ դպրոցում ավարտվել են շինարարական աշխատանքները, իսկ Կարմիրգյուղի թիվ 2, Վարդաձորի, Զորագյուղի, Ծովագյուղի, Ծակքարի, Սարուխանի թիվ 2, Նորատուսի թիվ 1, Ակունքի, Կարճաղբյուրի միջնակարգ եւ Գավառի թիվ 4 հիմնական դպրոցներում աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

Կրթահամալիրներ են կառուցվում Փոքր Մասրիկ, Մադինա, Թթուջուր, Արփունք, Մարտունի, Շատվան, Կախակն, Արեգունի, Մաքենիս, Դպրաբակ բնակավայրերում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մարզի 22 հանրակրթական դպրոցներին տրամադրվող լաբորատոր սարքավորումները պատշաճ պայմաններում տեղակայելու նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ նախատեսվել եւ այս պահին իրականացման փուլում են 20 դպրոցների լաբորատոր սենյակների վերանորոգման, արդիականացման աշխատանքները:

Մարզադահլիճների վերանորոգման աշխատանքներ են ընթանում Ճամբարակի թիվ 2, Վարդենիկի թիվ 1, Վարդենիսի թիվ 4 հիմնական, Սեւանի թիվ 6, Գանձակի թիվ 1 եւ թիվ 2, Գավառի թիվ 8, եւ Լճափի միջնակարգ դպրոցներում:

Ջեռուցման լոկալ համակարգով ապահովման աշխատանքներ են իրականացվում Այգուտի, Զովաբերի, Նորաշենի, Նորատուսի թիվ 2, Ծափաթաղի, Նորատուսի թիվ 3, Շողակաթի միջնակարգ, Սեւանի թիվ 2 հիմնական դպրոցներում: «Մինչ2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 500 մանկապարտեզ եւ նախակրթարան» ծրագրում ՀՀ Գեղարքունիքի մարզից ընդգրկված են 47 հաստատություններ, սակայն մեր կողմից իրականացվելիք աշխատանքների արդյունքում դրանք կարող են հասնել 58-ի, մասնավորապես՝ 30 մանկապարտեզ, 21 դպրոցահեն նախակրթարան եւ 7 նախակրթարան-կրթահամալիր:

Այսպիսով, 30 մանկապարտեզներից 11-ում շինարարական աշխատանքներն ավարտվել են, համապատասխան գույքով համալրվել եւ շահագործման են հանձնվել: Դրանք են՝ Վարդենիս քաղաքի Բանավան թաղամասի, Աստղաձորի, Ծովասարի, Զոլաքարի, Ծովինարի, Երանոսի, Վարդենիկի թիվ 1, Զորագյուղի, Սարուխանի թիվ 1, Գավառի թիվ 7, Ճամբարակի թիվ 3 մսուր մանկապարտեզները:



Ավարտական փուլում են Բերդկունքի եւ Գեղամասարի մանկապարտեզի շինարարությունները, ընթացքի մեջ են Խաչաղբյուրի եւ Արծվանիստի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով շինարարական աշխատանքների իրականացման ծրագրում ընդգրկված են Մարտունի քաղաքի թիվ 4, Կարմիրգյուղի, Սեւանի թիվ 3 եւ Ծովագյուղի մանկապարտեզները:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է նաեւ Զորագյուղի մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերանորոգում, որի մյուս մասնաշենքի շինարարական աշխատանքներն ավարտվել են 2024 թվականին՝ սուբվենցիոն ծրագրով:

Նախատեսվում է նոր մանկապարտեզների կառուցում Սեւան համայնքի Գագարին, Վարդենիս համայնքի Սոթք եւ Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրերում:

Ինչ վերաբերում է ուսուցիչների ատեստավորմանը, ապա այս պահի դրությամբ Գեղարքունիքի մարզում ատեստավորված է ուսուցիչների ընդհանուր թվի շուրջ 25 տոկոսը:

Առողջապահության ոլորտում առաջընթացը պայմանավորված է Լճափի բուժամբուլատորիայի կառուցման աշխատանքների ավարտով եւ Ծակքարի, Վաղաշենի ու Վարդենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոնների նոր շենքերի կառուցման մեկնարկով, մի շարք բուժհաստատությունների տեխնիկական վերազինմամբ:

Գյուղատնտեսական ոլորտում էլ առաջընթացը պայմանավորված է ջերմոցային տնտեսությունների, «Խելացի» անասնագոմերի կառուցմամբ, տոհմային կենդանիների ձեռքբերմամբ, գյուղոլորտում պետական աջակցության բազմաթիվ ծրագրերի ներդրմամբ, «Բուսաբուծության աջակցության» պետական ծրագրի ներդրման շնորհիվ աշնանացան ցորենի ցանքերի ավելացմամբ՝ 2024 թվականի համեմատ կազմելով շուրջ 3500 հեկտար:

2025 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտում որոշակի ձեռքբերումներ են արձանագրվել պետական աջակցության ծրագրի շրջանակներում:

«Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում 2025 թվականին մարզում հավաստագրված սերմերով 2215.6 հեկտար գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն եւ բազմամյա կերային մշակաբույսերով ցանք կատարած 336 շահառուներին, որպես սուբսիդիա, հատկացվել է շուրջ 166 միլիոն 108 հազար 610 դրամ, իսկ համայնքների կողմից կատարված համատարած մոնիթորինգի աշխատանքների համար՝ 4 միլիոն 980 հազար 280 դրամ: Մարզպետի աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է ընտրանքային մոնիթորինգ՝ 368.3 հեկտարի վրա:



Վերոնշյալ ծրագրի շրջանակներում սուբսիդավորվում է նաեւ աշնանացան ցորենի՝ բացառապես հավաստագրված սերմերով ցանքերը՝ 1 հեկտարի հաշվով 80000 դրամի չափով: 2025 թվականին 2026 թվականի բերքի համար մարզում իրականացվել է 13329.4 հեկտար աշնանացան ցորենի ցանք: «Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում հավաստագրված սերմերով 2025 թվականի աշնանը կատարվել է 8370.8 հեկտար աշնանացան:

«ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակում ձեռք է բերվել 128 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 45 միավոր տրակտոր եւ 1 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 575 միլիոն դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար նույն ժամանակահատվածում սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 68.2 միլիոն դրամ:

«Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակում հաստատվել է Սեւան համայնքի Գագարին բնակավայրի 1 շահառուի հայտ՝ շուրջ 673 միլիոն դրամի չափով:



«Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շրջանակում Խաչաղբյուր գյուղում ներգրավվել է 2 վարկ՝ 14,5 միլիոն դրամի չափով, Գանձակ համայնքում՝ 10 միլիոն դրամի վարկ:

«Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի» շրջանակում ձեռք է բերվել 203 մեղվափեթակ (մեղվաընտանիքներով) եւ փոխհատուցվել է ընդհանուր 8 միլիոն 120 հազար դրամ գումար:

«Ոչխարաբուծության եւ այծաբուծության զարգացման 2024-2028 թվականների ծրագրի» շրջանակում Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղում գործունեություն ծավալող 1 իրավաբանական անձի կողմից ձեռք են բերվել 267 գլուխ տոհմային ոչխարներ, որի դիմաց փոխհատուցվել է 60 միլիոն 75 հազար դրամ գումար, իսկ Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղում գործունեություն ծավալող ԱՁ-ի կողմից ձեռք են բերվել 30 գլուխ տոհմային ոչխարներ, որի դիմաց փոխհատուցվել է 3 միլիոն 325 հազար դրամ գումար:

«Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակում մարզի Սեւան համայնքի Գեղամավան, Ծաղկունք, Չկալովկա, Զովաբեր, Լճաշեն, Սեմյոնովկա, Ծովագյուղ, Սեւան բնակավայրերում 1 ընկերության կողմից իրականացվել է 395 գլուխ կովերի արհեստական սերմնավորման միջոցառումներ, Կառավարության կողմից տրամադրված գումարը կազմում է 3 միլիոն 950 հազար դրամ:

«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» իրականացման համար պետական աջակցության ծրագրի շրջանակում կնքվել է ապահովագրական 4 պայմանագիր՝ 5 հեկտար տարածքի համար: Ապահովագրվել են կարտոֆիլ եւ հացահատիկ մշակաբույսերը՝ համապատասխանաբար կարկուտ եւ երաշտ ռիսկերից:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրիե շրջանակում կնքվել է 1 պայմանագիր Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրում՝ 5-30 հեկտար հողերի միավորման նպատակով:

«Խելացի«» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագրի» շրջանակում փոխհատուցման բաղադրիչով կնքվել է «Պետական աջակցություն տրամադրելու վերաբերյալ» 1 պայմանագիր՝ Սեւան համայնքի Լճաշեն բնակավայրում 95-100 գլուխ խոշոր եղջերավոր անասունների համար նախատեսված «Խելացի» անասնաշենքի կառուցման նպատակով:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման եւ հաշվառման ծրագրի» շրջանակներում մարզի համայնքներում համարակալվել են 21393 գլուխ խոշոր եւ 121897 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:

Նշված գլխաքանակների համարակալման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կառավարության կողմից տրամադրված գումարը կազմում է 37 միլիոն 812 հազար 480 դրամ:

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի» շրջանակում մարզի համայնքներում պատվաստվել են 857866 գլուխ խոշոր եւ մանր եղջերավոր կենդանիներ: Նշված գլխաքանակի պատվաստման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կառավարության կողմից տրամադրված գումարը կազմում է 112 միլիոն 925 հազար 680 դրամ:

«Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կազմակերպություն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով 8940 հեկտար վարելահողերում կատարված մշտադիտարկման արդյունքների հիման վրա մարզին տրամադրվել է թունանյութ՝ նշված վնասատուի դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով: Նշված ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորումը կազմել է 2 միլիոն 741 հազար 360 դրամ:

Գեղարքունիքի մարզի աղբավայրերի փակման գործընթացների շուրջ «Արմենպրես»-ի թղթակցի հարցին պատասխանելով՝ մարզպետ Կարեն Սարգսյանը վստահեցրեց, որ այդ հարցը գտնվում է մարզային ու համայնքային իշխանությունների առաջնահերթ անելիքների ցանկում, եւ որ արվելու է հնարավորը, որպեսզի նախկին աղբավայրերը, որոնք ընդգրկում են ոչ քիչ տարածքներ, բնապահպանական որեւէ խնդիր չառաջացնեն:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

## ՄԵԽԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՓՈԽԱՆՑՎԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՑ ՈՒ ԴԵՍՊԱՆԱՏՆԻՑ



Հայաստանում Ռուսաստանի դեսպանության առընթեր պաշտպանության հարցերով կցորդի ապարատի աշխատակիցները շնորհավորել են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղի բնակիչ, Հայրենական մեծ պատերազմի վետերան Մեխակ Տիգրանի Ավետիսյանին՝ նրա 104-րդ տարեդարձի կապակցությամբ եւ փոխանցել Ռուսաստանի Դաշնության նախագահի Վլադիմիր Պուտինի ուղերձը:

Ինչպես տեղեկացրեց Սարուխան գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Հայկ Մուդոյանը, ՌԴ դեսպանատան աշխատակիցներն անձամբ են այցելել Մեխակ Ավետիսյանին, զրուցել նրա հետ, կիսվել տպավորություններով, իսկ Մեխակ Ավետիսյանն էլ իր երախտագիտությունն է հայտնել ՌԴ նախագահին ու դեսպանատան աշխատակիցներին՝ իր հանդեպ ցուցաբերած հարգանքի ու գնահատանքի համար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մեխակ Ավետիսյանը պաշտպանել է Պսկովը, 242-րդ առանձին զենիթահրետանային դիվիզիոնի կազմում կռվել է Ստարայա Ռուսայի մոտ՝ հյուսիս-արեւմտյան ճակատում: Հետագայում, 2-րդ Բալթյան ճակատի կազմում, մասնակցել է Լատվիայի ազատագրմանը, որտեղ էլ դիմավորել է ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ հաղթանակը: 1945 թվականի օգոստոս–սեպտեմբեր ամիսներին մասնակցել է ճապոնիայի միլիտարիստներից հյուսիս-արեւելյան Չինաստանի ազատագրմանը: Պարգեւատրվել է «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի», «Կարմիր Աստղ», «Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշանով եւ բազմաթիվ մեդալներով: Զորացրվել է 1945 թվականի դեկտեմբերին, իսկ 1946 թվականից անցել է մանկավարժական աշխատանքի: Մեկ տարի դասավանդել է Գեղարքունիքի դպրոցում, իսկ հաջորդ տարվանից մինչեւ 2005 թվականը՝ Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1975-1987 թվականներին աշխատել է նույն դպրոցի տնօրենի պաշտոնում: Կրթել ու կյանք է ճանապարհել հազարավոր մարդկանց: Թոշակի անցնելուց հետո գրել եւ հրատարակել է հայրենի եզերքին նվիրված գրքեր: Ունեցել է երեք զավակ, 27 թոռ եւ ծոռ:

-Նա մոտ 100 տարեկան հասակում հեղինակեց «Սարուխանի հերոս զավակը» գիրքը, որը պատմում է իր ծոռ, Արցախյան վերջին պատերազմում հերոսի մահով ընկած Հակոբ Արայիկի Հարությունյանի կարճատեւ, բայց անմահացած կյանքի մասին: Մեխակ Ավետիսյանի կյանքը, իրոք, նման է լեգենդի: Այս տարիքում էլ նա շարունակում է ապրել իր հայրենիքի, շրջապատի հոգսերով, մարդկանց լավատեսություն ներշնչելով: Վերջերս էլ մեր դպրոցի մանկավարժական կոլեկտիվը սիրով ընդունեց Մեխակ Ավետիսյանին, ու այդ հանդիպումը վերածվեց շատ սպասված ու շքեղ միջոցառման, երախտագիտության անմոռաց դասի,- ներկայացրեց Հայկ Մուդոյանը:

**Խոսրով Խլղաթյան**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՍԱԿԱՎՈՐՎԵԼ Է 13 ՏՈՆՆԱ 210 ԿԻԼՈԳՐԱՄ ԱՂԲԻ ԹԱՓՈՆ




2025 թվականի հուլիսի 26-ից Սեւան քաղաքում ներդրվել է թափոնների տեսակավորման նոր համակարգը, ինչի արդյունքում էլ անցած տարվա վերջին հինգ ամիսների ընթացքում տեսակավորվել եւ Հրազդանի կենտրոնական աղբավայր է տեղափոխվել 13 տոննա 210 կիլոգրամ աղբի թափոն:

Արդեն 6 ամսից ավելի սեւանցիները աղբահանության ոլորտում քայլ առ քայլ ձեւավորում են նոր մշակույթ:

Կապույտ եւ կանաչ թափոնամանները, որոնք քաղաքի տարբեր հատվածներում են՝ թաղամասերում, փողոցներում, հասարակական նշանակության շենք-շինությունների հարակից տարածքներում, առանձնատների բակերում, հուշում են, որ վերամշակելի թափոններն այսուհետ ունեն իրենց համար հատկացված տարաներ:

Վերամշակելի թափոնները «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ»ՍՊԸ-ի միջոցով, որին համայնքը արտապատվիրակել է տեսակավորված աղբի հավաքման եւ տեղափոխման ողջ գործընթացը, Սեւանին նվիրաբերված թափոնատար մեքենայով տեղափոխվում են Հրազդանի սանիտարական աղբավայր, որտեղ էլ ստանում են «երկրորդ կյանք»:

Համաձայն «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի տնօրինության կողմից ներկայացված վիճակագրական տվյալների՝ 2025 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ դեկտեմբերի 30-ը տեսակավորման թափոնամաններից տեղափոխվել է 400 կգ ապակի, 10360 կգ ստվարաթուղթ եւ թուղթ, 600 կգ մետաղ, 50 կգ պոլիէթիլենային տոպրակ, 1800 կգ պլաստիկ:

Իհարկե, ինչպես տեղեկացնում են ՍՊԸ-ից, տեղափոխվող թափոններն ամբողջովին տեսակավորված չեն եղել. Հրազդանի սանիտարական աղբավայրում դրանք եւս մեկ անգամ տեսակավորվել են, որի արդյունքում 26090 կգ թափոն տեղափոխվել է աղբավայրի՝ ընդհանուր օգտագործման բջիջ: Աղբահանությունից թափոնների կառավարման անցումը հնարավոր է բոլորիս պատասխանատու վերաբերմունքի եւ քաղաքի նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի շնորհիվ:

Սեւանում սկզբնաղբյուրում կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման նոր համակարգը կյանքի է կոչվել Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի կողմից, եւ իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ:

**Արմինե Ղուկասյան**

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱՆԻՑ 2026 ԹՎԱԿԱՆ Է ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 27 ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում նախորդ տարվանից 2026 թվական է տեղափոխվել սուբվենցիոն 27 ենթածրագիր՝ 3 միլիարդ 295 միլիոն 849 դրամ արժեքով:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, 2025 թվականից 2026 թվական են տեղափոխվել Մարտունի քաղաքի եւ Վաղաշեն, Գեղհովիտ, Վերին Գետաշեն, Լիճք, Ծակքար, Երանոս գյուղերի փողոցների ասֆալտապատման, Ծովինարի, Վարդենիկի, Վերին Գետաշենի, Լիճքի, Մադինայի, Վաղաշենի, Վարդաձորի, Զոլաքարի, Գեղհովիտի ոռոգման ցանցերի կառուցման, Մարտունի քաղաքի, Աստղաձոր, Վերին Գետաշեն, Ծակքար գյուղերի լուսավորության ցանցի անցկացման, Մարտունի քաղաքի թիվ 2 , թիվ 3 եւ Արծվանիստի մանկապարտեզների, Լիճքի եւ Ծովինարի մշակույթի տների հիմնանորոգման ենթածրագրերը:

-Նախորդ տարվանից 2026 թվական տեղափոխված ենթածրագրերի մեծ մասի մեկնարկը տրվել է 2025 թվականի ընթացքում: Բավական է ասել, որ 3 միլիարդ 295 միլիարդ դրամ ընդհանուր արժողության ծրագրերից հաջողվելի է իրականացնել շուրջ 1,2 միլիարդ դրամի շինարարություն: Այդ ենթածրագրերի մեծ մասը միաժամանակ գտնվում են պայմանագրերով սահմանված ժամկետների մեջ: Այնպես, որ եղանակների տաքանալուն պես շինարարական աշխատանքները բոլոր ուղղություններում կծավալվեն ամբողջ թափով, ու բոլոր ենթածրագրերը կավարտվեն այս տարվա ընթացքում, ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

**Խոսրով Խլղաթյան**



## ԳԱՎԱՌ, ՍԵՎԱՆ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՆԵՐՔԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ



Գեղարքունիքի մարզի Գավառ, Սեւան եւ Ճամբարակ համայնքներում նախորդ տարվա վերջին կայացել են ներքին փոխադրումների իրականացման նպատակով հայտարարված մրցույթները, որոնց արդյունքներով արդեն հայտնի են հաղթող կազմակերպությունները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ներքին ուղեւորափոխադրումների իրականացման համար Գավառ համայնքում մրցույթը հայտարարվել է մեկ առանձին, իսկ Սեւան ու Ճամբարակ համայնքի համար՝ մեկ ընդհանուր փաթեթով: Ասել է, թե «Գավառտրանս» ՍՊԸ-ն սպասարկելու է Գավառ համայնքի, իսկ «Արեւափայլ» ՍՊԸ-ն՝ Սեւան եւ Ճամբարակ համայնքների ներքին ուղեւորափոխադրումները:

Այժմ հաղթող կազմակերպություններում ընթանում են տրանսպորտային միջոցների ձեռքբերման աշխատանքներ, իսկ առաջիկա ամիսների ընթացքում, մինչեւ հունիս ամիսը նշյալ համայնքներում կտրվի ներքին ուղեւորափոխադրումների գործընթացի մեկնարկը:

Իսկ ահա Վարդենիս եւ Մարտունի համայնքների ներքին ուղեւորափոխադրումների համար վերջին տարիներին հայտարարարված մի քանի մրցույթներում մասնակիցներ չլինելու պատճառով համայնքապետարանների ենթակայությամբ ստեղծվում են փակ բաժնետիրական ընկերություններ, որոնք եւ համապատասխան տրանսպորտային միջոցներ ձեռք բերելուց հետո իրականացնելու են երթուղային գծերի սպասարկումը:

**Խոսրով Խլղաթյան**

## ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՑԱԾՐ Է ՄՆՈՒՄ 12 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2025 թվականի փետրվարի 11-ի համեմատ այս տարվա նույն օրվա դրությամբ ցածր է մնում 12 սանտիմետրով:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունից, 2026 թվականի փետրվարի 11-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 23 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրը գրանցված 1900 մետր 35 սանտիմետր նիշի դիմաց: Իսկ այս տարվա հունվարի 11-ից մինչ փետրվարի 11-ը Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 1 սանտիմետրով:

2026 թվականի հունվարի 1-ից մինչ փետրվարի 11-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 6 միլիոն 88 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լիճ թափվող գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

# ԱՎԵՐԱԿ, ԲԱՅՑ ՇՔԵՂԱՇՈՒՔ ՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՄՇԻ ՎԱՆՔԸ


Նկ. 130.

/սկիզբը` էջ 1-ում

«Պողոս քահանայի հետ աղերսվող խաչքարի զարդամոտիվները կրկնվում են մի քանի այլ գեղաքանդակ խաչքարերի վրա, որոնք, մասնավորապես, աչքի են ընկնում թռչնաքանդակի կերտման կատարյալ վարպետությամբ: Այս խաչքարերի զարդամոտիվները հիմք են տալիս եզրակացնելու, որ տաղանդավոր քանդակագործները ստեղծել են քանդակի անկրկնելի գործեր, որոնք ոչ միայն հնարավորություն են տալիս ընդլայնելու մեր իմացությունները քանդակագործական դպրոցների վերաբերյալ, այլեւ հարստացնում են խաչքարային արվեստի բնագավառը: Ուշադրության է արժանի եկեղեցու հյուսիսային կողմում հայտնաբերված խաչքարի ստորին մասը, որտեղ քանդակված է ռամկական հագուստով տղամարդ, աջ ձեռքը` գոտկատեղին, ձախը` երեսին: Քանդակը, թերեւս, կարելի է բնորոշել իբրեւ «մտածող մարդը»,-գրում են հեղինակները:

Հնավայրում հայտնաբերված բազմաթիվ տապանաքարերը հիմնականում ուղղանկյունաձեւ, կոփածո քարից մեծ չափերի գերեզմանաքարեր են, որոնցից մի քանիսը հարդարված են երկրաչափական զարդաքանդակներով: Բոլոր տապանաքրերը կրաքարե զանգվածց են, որոնք թեեւ անարձանագիր են, սակայն աչքի են ընկնում կատարյալ մշակվածությամբ: Ենթադրելի է, որ այդ տապանաքարերը Խամշի վանքի միաբանության ներկայացուցիչների գերեզմանական կոթողներն են:

Գլխավոր եկեղեցու հարավային պատից շուրջ 30 մետր հեռավուրությամբ պահպանվել է մեկ այլ միջնադարյան գերեզմանատուն, որտեղ հարթ, հաճախ կոպտատաշ շիրմաքարերի կողքին կանգնեցվել են նաեւ հուշակոթողի բաղկացուցիչ մասը կազմող գեղաքանդակ խաչքարեր, որոնք, ինչպես պարզվել է, ժամատունը կառուցելիս տեղահան են արվել ու օգտագործվել որպես գեղազարդ վեմեր` ագուցվելով գավթի հյուսիսային, հարավային եւ արեւմտյան պատերին, արտաքին ու ներքին կողմերից: Տապանաքարերից մեկն աչքի է զարնում արտակարգ նուրբ, բարձր արվեստով արված երկրաչափական քանդակներով: Քառանկյունի կոփածո, հարթ տապանաքարի երեսն ամբողջովին զբաղեցնում են թեք շեղանկյունաձեւ զարդաքանդակները:

Տապանաքարերով միջնադարյան գերեզմանատուն է հայտնաբերվել նաեւ փոքր եկեղեցու հյուսիսային ու հարավային կողմերում: Դրանք եւս արձանագիր չեն, ու հեղինակների կարծիքով, թվագրվում են 12-13-րդ դարերով:

Խամշի վանքը բավականին հարուստ է նաեւ վիմագիր արձանագրություններով, որոնք պահպավել են շինությունների պատերին ու խաչքարերի քիվերին ու պատվանդաններին: Քարեղեն այդ հիշատակարանները, որոնք, բարեբախտաբար, պահպանվել ու մեզ են հասել գրեթե անաղարտ վիճակում, իրենցից պատմագիտական իսկայական արժեք են ներկայացնում:



Դրա հետ մեկտեղ, Խամշի վանքի ավերումից հետո, անհետացել են ամենատարբեր բնույթի արձանագրություններ, որոնք կարող էին ամբողջացնել համակառույցի տարեգրությունը: Խամշի վանքի մայր տաճարի որմերին շինարարական արձանագրություն չի փաստագրվել, իսկ պեղումների ընթացքում հայտնաբերված վիմագրերը հիմնականում նվիրատվական բովանդակություն ունեն: Վիմագիր արձանագրություններից ամենաընդարձակը բաղկացած է երկու տողից, որը փորագրվել է եկեղեցու` կրաքարից կերտված քիվին: Թեեւ հայտնաբերվել են արձանագիր յոթ վեմերը, սակայն պակասում է բնագրի մի զգալի հատվածը, քանի որ մի քանի արձանագիր քարեր պակասում են: Վիմագրությունն ասում է. «...ԵՐՈՒ ՇՈՒՐՋԱՌԱՆԻ ՋՄԻԱՅՓՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ Ի ՅՈՒԽՏ ԵԿԵՂԵՑՈՑ ՄԻՆՉ Ի ՍՐՈՂԱՆ ՋՈՒՐՆ,ՄԻՆՉ Ի ԿՈԾՈՂՈՅ ԽՈՌՆ, ՋՎԱՃԱՌՆ Ի ՏՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԽԱՄՇԻ ՎԱՆԱՑՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԱԾ Է ՈՒ Ի ՅԱՅՍ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԱՅՍ, ՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՍ ԳԵՐԵԶՄԱՆԵՍ, ՈՎ ՉԿԱՏԱՐԷ, ԿՐԿԻՆ ՆԶՈՎԱԾ Է: Ի:Չ: /1251/ ԹՎԻՍ ԳՐԵՑԱՎ:



Այս չափազանց արժեքավոր արձանագրությունը փորագրվել է Ներսես Գ-ի կաթողիկոսության ժամանակ, 1235-1262 թվականներին ու վերաբերում է Խամշի վանքի թեմին պատկանող տարածքների սահմանների ճշգրտմանը: Նվիրատվական է նաեւ մեկ այլ արձանագրություն. «ԿԱՄԱՎՆ ԱՍՏԾՈՅ ՄԵՔ ԲՈԼԿԱՅ ՈՐԴԻՔ, ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԾԱՌՋԱՐԴԱՐ...»:

Ըստ հեղինակների` Բոլիկ անձնանունը վկայված է նաեւ Վայոց Ձորում` Գնդեվանքի գավթի հյուսիսային պատին կից մույթին ներքուստ փորագրված արձանագրության մեջ: Համաձայն այդ վկայության` Բոլկա որդի Աշոտն իր որդու` Հասանի մահվան կապակցությամբ մեծ այգի է նվիրել վանքին, իսկ վերջինիս հոգու փրկության համար տարին երկու պատարագ ստացել Նոր կիրակի տոնին:

Խաչքարերի վրա պահպանված վիմագրությունները պահպանել են հավերժի ճամփան բռնած բարեխոսների անունները` Հակոբ, Վրթանես քահանա,





Կարապետ, Հայրապետ, Ստակիս, Խոցայդեղ, Ստուր Աղբերիկ, Պողոս պատվական քահանա, Հայր Զաքարե, Հազարդեղ, Այլափսոս, Գրիգոր, Սպարապետ, Զաբետ, Միխիդար, Հովհաննես եպիսկոպոս:

Գեղաքանդակ խաչքարի վերին մասը վանքի տարածքից տեղափոխվել է Ճամբարակ համայնքի Մարտունի գյուղի դպրոցի բակ: Թիկունքիւն պահպանվել է արձանագիր յոթ տող. «Ի ՈՀԲ /1223/ ԹՎԻՍ ՀԱՅՈՑ ԵՍ ՄԱՄԱՔՍ ԵՎ ՈՐԴԻ ԻՄ ԿՈՒԿՍ Ի ԽԱՉԵՆՈՅ, ՈՐԴԻ ՀԱՐԲԱ ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՍԱԿԱ ԵՂԲՈՐ ԻՄՈՅ»:

Մեծ տաճարի սրբատաշ քարերից մեկին քանդակված են մի քանի խաչաքանդակներ: Խաչերից մեկի վերին մասում պահպանված է հետեւյալ արձանագրությունը. «ՇԱՄՇԻ ԱՅՑ ՅԵՐԵՎԱՆԷ»:

Հեղինակների ենթադրությամբ` Շամշին ծագումով Երեւանից է, ով ուխտի կամ այցի է եկել Խամշի վանք:

Անշուշտ, գեղեցիկ քանդակներին համահունչ էլ արվել են գեղեցիկ փորագրությունները` պահպանելով ձեռագրերի ու տառատեսակների բազմազանությունը, հետաքրքիր, ոչ պակաս շքեղ ձեւավորումները:

## ԽԱՄՇԻ ՎԱՆՔԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Խամշի վանքի պեղումներ արդյունքում հայտնաբերվել է նյութական մշակույթի մեծաքանակ իրեր, որոնք պատրաստվել են քարից, մետաղից, իսկ հիմնականում` կավից: Իրենցից մշակութային մեծ արժեք են ներկայացնում հատկապես խեցեղեն իրերը, որոնք ժամանակագրական առումով բաժանվում են երեք խմբի` 10-11, 12-14 եւ 17-րդ դարերի: Առաջին խմբի մեջ են մտնում փոքր եկեղեցու պեղումներով հայտնաբերված կղմինդրները, որոնք փաստում են, ըստ հեղինակների, որ կիսակլոր կղմինդրը, հարթ տարբերակի հետ միավորված, հանդես է գալիս արդեն 9-10-րդ դարերում: Իսկ 12-14-րդ դարերի գտածոներն ամենաշատն են, որոնք իրենց հերթին փաստում են, որ այդ ժամանակաշրջանն է հենց եղել վանքի գործունեության ամենաակտիվ շրջանը: 17-րդ դարում թվագրվող գտածոների թվում ուշագրավ է կճուճանման անոթը, որը կարեւոր է ոչ միայն թվագրում ունենալու, այլ այն առումով, որ շուրթի վրա նշվում է նաեւ անոթի տեսակի անվանումը` Դուճ, ինչը եզակի երեւույթ է խեցեգործության մեջ:

«ԱՅՍ Է ԴՈՒՃՍ ՍԱՐԳՍԻՆ, ԹՎԻՆ ՌՃԽ/1691/»: Արձանագրությունը վկայում է նաեւ անոթի տիրոջ անունը , մաժամանակ այն փաստը, որ Խամշի վանքը գործել է նաեւ 17-րդ դարում, ուր այցելել են թե´ ուխտավորներ, թե´ առեւտրականներ կամ այլ զբաղմունքի տեր մարդիկ:

Կենցաղային խեցեղենը բաժանվում է անջնարակ եւ ջնարակապատ խմբերի: Առաջին խմբի մեջ մտնում են կարասները, կճուճները, սափորները, թասպնակները, ծծումները եւ լուսավորության միջոցնե-


Նկ. 106

րը: Երկրորդ խմբի մեջ մտնում են ջնարակապատ թասերը:

Խամշի վանքի կարմրափայլ կարասների մակերեսները հարդարված են մատնեքազարդով, կետերով, սեպաձեւ զարդերով: Առավել հետաքրքրական են դրոշմազարդ օրինակները, որտեղ արտացոլված են Կենաց ծառի շուրջը խմբված թռչուններ եւ կենդանիների պատկերներ:

Ջնարակապատ խեցեղենը, որը սակավ է հայտնաբերվել, հիմնականում թվագրվում է 12-14-րդ դարերով: Մի քանի բեկոր էլ վերաբերում են 15-16-րդ դարերին: Դրանք հիմնականում թասեր են` ինչպես ամբողջական, այնպես էլ բեկորային տեսքով: Խեցեղենի մեջ կան փորագրումով արված բազմագույն, երկրաչափական զարդերով հարդարված օրինակներ: Ջնարակած խեցեղենի բեկորից է պատրաստված նաեւ մեկ խաղաքար: Հախճապակե անոթի ուշագրավ օրինակ է թասի նստուկի հատվածը, որը գտնվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային պատի տակ` ներքուստ ու արտաքուստ պատված փիրուզագույն ջնարակով: Ներսի մակերեսը հարդարված է ծաղկապատկերներով: Դրանք արված են կետերով, որոնք լցված են կոբալտով, իսկ թերթիկներն ընդգծված են ոսկով ընդելուզված խորանարդներով, ինչն առավել շքեղ տեսք է հաղորդում անոթին, որը պատրաստվել է 12-13-րդ դարերի ընթացքում: Սա էլ իր հերթին հուշում է, որ վանքում հոգեւորականներն ու սպասավորներն ապրել են բարվոք ու շքեղ կենցաղով:

/շարունակությունը` էջ 5-ում/

# ԱՎԵՐԱԿ, ԲԱՅՑ ՇՔԵՂԱՇՈՒՔ ՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՄՇԻ ՎԱՆՔԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Վանքի պեղումներով հայտնաբերված շինարարական խեցեղենը եղել է հարթ, կիսակլոր ու հարթ-կիսակլոր: Կղմինդրների մեջ ուշագրավ է արձանագիր օրինակը, որը հաղորդում է պատրաստող վարպետի անունը՝ Թեոդորոս: Առանձնակի ուշադրության են արժանի կղմինդրների ճակտոնները, որոնց որոշ օրինակներ ներկված են կարմիր գույնով: Դրանք եռանկյունաձեւ են՝ վերին հատվածում ելուստով թեքված դեպի ներքեւ՝ նմանվելով կտուցը ներքեւ իջեցրած թռչնի գլխի: Շինարարական խեցեղենի թվում են նաեւ փողրակները, որոնք հուշում են այն մասին, որ վանական այս համալիրն ունեցել է առանձին ջրամատակարարում ու ջրահեռացում:

Հայտնաբերված մետաղե իրերից ուշադրության են արժանի երկաթե եռամատ եղանը, խողովակակոթառ դուրը, ծալովի դանակի միասայր շեղբը, տաշտաքերիչը, եզան պայտը, դռան մետաղի հատվածները, գամերը, ձիու սանձի առանձին մասերը:

Քարե առարկաներից ուշադրության են արժանի երեք սրաքարերը, որոնցից մեկի ծայրին փորձել են անցք անել՝ գոտուց կախելու համար, բայց աշխատանքը կիսատ է մնացել:

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաեւ զարդեր, որոնցից երկուսը բեկորային են՝ հարդարված բուսական մոտիվներով, իսկ երրորդը, որն ամբողջական է, մետաղից պատրաստված կախազարդ է՝ Սֆինքսի պատկերով:



Նկ. 96.

Պեղումների ժամանակ հայտնաբերվել է մեկ պղնձե դրամ, որը հատվել է Մոսուլի Զենգյան իշխանության տիրակալ Իզզ ալ-Դին Մասուդ Առաջինի իշխանության ժամանակ, 1180-1193 թվականների ընթացքում:

Մետաղադրամի դիմերեսին ծալապատիկ նստած կնոջ դիմապատկեր է՝ ձեռքերում բռնած մեծ կիսալուսին: Կողքերի գրությունն է. «Թողարկված Մոսուլում հիջրայի 585 թվականին /1189/»:





Փաստորեն, Խամշի վանքի պեղումներով հայտնաբերված կավե իրերը ցույց են տալիս, որ այստեղ օգտագործել են ինչպես բարձր որակով պատրաստված տոնական սեղանի սպասք, այնպես էլ կենցաղում օգտագործվող առտնին նշանակության խեցեղեն: Իսկ մետաղե գտածոները տնտեսության մեջ եւ կենցաղում լայնորեն օգտագործվող առարկաներ են, որոնք փաստում են վանական համալիրի տնտեսական ակտիվ գործունեության մասին:

Ըստ հեղինակների՝ Խամշի վանքի մենաստանի շուրջբոլորը նշմարվում են գյուղական բնակավայրի ավերակներ, որոնք զբաղեցնում են բավականին մեծ տարածություն: Իսկ մենաստանին դեմ հանդիման, բարձրադիր լեռան կատարին վեր է խոյանում 13-րդ դարի կիսավեր ամրոցն իր հզոր աշտարակներով, որի պաշտպանությանն են ապավինել վանքի միաբանության անդամներն ու տարածքի բնակչությունը դժնդակ ու աղետալի օրերին:

Կարելի է նաեւ ենթադրել, որ հեց այս ամրոցում է գտնվել աշխարհիկ այն հայկական իշխանությունը, որը տիրել ու պաշտպանել, քաջալերել ու առաջ է մղել հոգեւոր նույնքան հզոր, երեւելի իշխանությանը:

**Խոսրով Խլղաթյան**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 76,9 ՀԱԶԱՐ ՀԵԿՏԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի համայնքներում համայնքային եւ պետական սեփականություն հանդիսացող 280 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության են տրամադրվել 76.9 հազար հեկտարը, որից 47.6 հազար հեկտարը համայնքային, 29.3 հազար հեկտարը պետական սեփականություն հանդիսացող հողամասեր են:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, հաշվարկված 272.2 միլիոն դրամ վարձավճարի դիմաց գանձվել է 267.3 միլիոն դրամ վարձավճար, որը կազմում է ընդհանուր գումարի 98.2 տոկոսը:

2025 թվականի ընթացքում մարզի 5 համայնքներում աճուրդ վաճառքով օտարվել են 142 միավոր հողակտորներ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 30 հեկտար: Այդ գործարքների արդյունքում համայնքների բյուջեներ է մուտքագրվել 130.4 միլիոն դրամ:

Հողամասերը օտարվել են սահմանված կադաստրային արժեքների շուրջ 151 տոկոսի չափով:

## ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում տեղի է ունեցել Դիլիջանի նոր թունելի կառուցման նպատակով հողերի օտարման եւ տարաբնակեցման հարցերին նվիրված հանրային քննարկում:

Հանրային քննարկմանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմերի ներկայացուցչներ, անհատ քաղաքացիներ:

Խորհրդատու կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպման մասնակիցներին ծանոթացրել են բոլոր այն գործընթացներին, որոնց հետ առնչվելու են ազդակիր անձինք հողերի օտարման եւ տարաբնակեցման ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, ներկայացվել են փոխհատուցում ստանալու իրավունքները, բողոքների լուծման մեխանիզմները եւ բազմաթիվ այլ թեմաներ:

Խորհրդատու կազմակերպությունների մասնագետները պատասխանել են նաեւ հանդիպման մասնակիցների հարցերին, որոնք հիմնականում վերաբերել են օտարման ենթակա հողերի, ծառերի, մշակաբույսերի, շենք-շինությունների գնահատման մեխանիզմներին:

**Արմինե Ղուկասյան**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի մի շարք բնակավայրերում նախորդ տարվա ընթացքում շահագործվել կամ այս տարվա փետրվարի դրությամբ կառուցման ընթացքի մեջ են մի շարք ջերմոցային տնտեսություններ, ինչի արդյունքում նկատելի զարգացում է ապրում գյուղատնտեսական այս ճյուղը, ստեղծվում են նոր աշխատատատեղեր:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունից, «Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի» շրջանակում Լճաշեն բնակավայրում «ԳՐԻՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից 10.5 հեկտարի վրա կառուցվել է ջերմատուն, որն արդեն իսկ գործում է: Ջերմատանը մշակվում է վարունգ եւ լոլիկ, ստեղծվել է 130 նոր աշխատատեղ:



Սեւան համայնքի Գագարին բնակավայրի հատվածում «ԷԿՈ ՖԱՈՒՆԱ» ՍՊԸ-ի կողմից 4 հեկտարի վրա կառուցվող ջերմատնային տնտեսության աշխատանքներն արդեն շուրջ 70 տոկոսով ավարտված են, որտեղ նախատեսված է վարդի մշակություն: Ջերմատան շահագործմամբ կստեղծվի 70-80 նոր աշխատատեղ:

Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի տարածքում «ԳԵՎ ՄԻԿ» ՍՊԸ կողմից 5.5 հեկտարի վրա հիմնված ջերմատունն արդեն իսկ գործում է, որտեղ ստեղծվել է մոտ 150 աշխատատեղ:

Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի տարածքում «ՄՈՒLՏԻ ՖՈՒՏՍ» ՍՊԸ կողմից 2 հեկտարի վրա հիմնված ջերմատունը արդեն գործում է, ստեղծվել է մոտ 50 աշխատատեղ:

Սեւան համայնքի Գեղամավան բնակավայրի տարածքում «ԱԹԱՆԵՍՅԱՆՍ» ՍՊԸ կողմից 2 հեկտարի վրա կառուցվող ջերմատան աշխատանքներն արդեն ավարտական փուլում են, նախատեսվում է ստեղծել 50 նոր աշխատատեղ:

Պետական աջակցության ընդհանուր չափը վերոնշյալ կազմակերպություններին կազմել է 736,5 միլիոն դրամ:

**Խոսրով Խլղաթյան**

## ԿԱՅԱՑԱՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

/սկիզբը՝ էջ 2-ում/

-Դուք գիտեք, որ 2025 թվականի ընթացքում արդեն Սեւան, Գավառ եւ Ճամբարակ համայնքներում կուտակված աղբը միանգամից տեղափոխվում է Հրազդանի սանիտարական աղբավայր: Առաջիկայում այս կարեւոր ծրագրին միանալու են նաեւ Մարտունի եւ Վարդենիս համայնքները, որի արդյունքում փակվելու են նաեւ այս երկու համայնքների կենտրոնական աղբավայրերը: Բոլոր աղբավայրերի փակումը մենք դիտարկում ենք որպես «Կոտայքի եւ Գեղարքունիքի կենցաղային կոշտ թափոնների կառավարման» ծրագրի մաս, որը քայլ առ քայլ իրականացնում ենք համայնքների հետ համագործակցությամբ: Արդեն երկու տարի է, ինչ մեր նախաձեռնությամբ եւ համայնքների ու շինարարական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կենտրոնական աղբավայրեր է տեղափոխվում նաեւ շինարարական աղբը, որը ծառայելու է որպես կենցաղային կոշտ թափոնների ծածկման հուսալի միջոց: Համայնքների կողմից կձեռնարկվեն նաեւ այլ միջոցներ, որպեսզի հիմնովին փակվեն բոլոր փոքր ու մեծ աղբավայրերը՝ այլեւս չառաջացնելով բնապահպանական հիմնախնդիրներ,-ներկայացրեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված աշակերտների ընդհանուր թիվը 2025-2026 ուսումնական տարում Գեղարքունիքի մարզում կազմում է 640, որոնցից 47-ը սովորում են ԿԳՄՍ նախարարության ենթակայության դպրոցներում: Ինչպես ներկայացրեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտների թիվը նվազել է 35-ով:

2024 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագրի շրջանակում ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական 14 ուսումնական հաստատություններ են գործուղվել 20 ուսուցիչ: Բացի այդ, մեկ անձ նշանակվել է Շողակաթի միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված եւս 14 անձ աշխատանքի են ընդունվել մարզի հանրակրթական հաստատություններում այլ հաստիքներով:

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված եւ ՀՀ Գեղարքունիքի մարզ տեղափոխված բնակչության թիվը 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմում է 2834 մարդ, 856 ընտանիք:

Այնուհետ Կարեն Սարգսյանը պատասխանեց լրագրողների տարաբնույթ հարցերին, որոնք վերաբերում էին Սեւանա լճի եւ նրա ջրահավաք ավազանի պահպանության, Գեղարքունիքի մարզի միջազգային համագործակցության ու օտարերկրյա ներդրումային ծրագրերի, զբոսաշրջության զարգացման, սահմանամերձ համայնքներում հողերի եւ ջրային պաշարների անվտանգ օգտագործման, Վարդենիսի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցման, Գավառի պետթատրոնի գործունեության, Սոթքի ոսկու հանքավայրի աշխատանքների, առաջիկա խորհրդարանական ընտրությունների հետ կապված խնդիրներին:

**«Գեղամա աշխարհ»**

3.qxd 15/02/2026 17:54 Page 6



## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ-2026» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի մարզպետի 2026 թվականի համապատասխան որոշմամբ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներում փետրվար ամսից մեկնարկել եւ ակտիվ կերպով ընթանում են «Գեղարքունյաց ձմեռ–2026» մարզամշակութային միջոցառումները, որոնց ծրագրի ցանկում ընդգրկված են ձմեռային մարզաձեւերի մրցումներ, տարաբնույթ խաղեր՝ բարձունքի գրավում, ձնագնդիով հարված նշանակետին, սպորտլանդիայի անցկացում, ինչպես նաեւ՝ ազգային խաղեր:

Մարզի հանրակրթական դպրոցներում տեղի ունեցող միջոցառումների ընդհանուր համակարգումն իրականացնում է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությունը:



«Գեղարքունյաց ձմեռ–2026» մարզամշակութային միջոցառումների դպրոցական փուլին կհաջորդեն համայնքային փուլի մրցումները, որի պատշաճ անցկացման համար կազմակերպիչները կառաջնորդվեն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ սահմանված հանձնարարականներով:

«Գեղարքունյաց ձմեռ–2026» մարզամշակութային միջոցառումների նպատակն է՝ Գեղարքունիքի մարզի համայնքներում մասսայականացնել ձմեռային մարզաձեւերը եւ ազգային խաղերը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից համագործակցված աշխատանք տանել ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման ուղղությամբ, մարզի ազգաբնակչության առօրյայում արմատավորել առողջ ապրելակերպ:

**Գեղամ Չարվադարյան**

## ՎԱՐԴԵՆԻԿՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԿՈՐՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկի գյուղի Ռիչարդ Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում կայացել է դպրոցի վաղամեռիկ ուսուցիչ Կորյուն Հովհաննիսյանի հիշատակին նվիրված շախմատային 14-րդ մրցաշարը:

Ինչպես տեղեկացրեց Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի փոխտնօրեն Ժորա Ղումաշյանը, մրցաշարի մասնակիցների թիվն այս տարի եղել է աննախադեպ: Վարդենիկ են ժամանել տարբեր համայնքները ներկայացնող շուրջ 106 դպրոցական, որոնց թվում եղել են տարբեր մրցաշարերի մասնակիցներ եւ կարգային շախմատիստներ:

Մրցաշարն անցկացվել է 3 տարիքային խմբերով՝ շվեյցարիական մրցակարգով: Յուրաքանչյուր տարիքային խմբի մրցանակային տեղերը զբաղեցրած շախմատիստները պարգեւատրվել են դիպլոմներով, գովասանագրերով, գավաթներով, դրամական պարգեւներով, մեդալներով եւ խրախուսական մրցանակներով:

Առաջին տարիքային՝ մինչեւ 8 տարեկանների խմբում հաղթող է ճանաչվել Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքը ներկայացնող Ալեքս Մխիթարյանը: Երկրորդ տեղը գրավել է Վարդենիկի թիվ 1 հիմնական դպրոցի սան Նարեկ Եղոյանը, երրորդ տեղը՝ նույն դպրոցի սան Գոհար Պետրոսյանը: Կրտսեր տարիքի խմբի ամենակրտսեր մասնակիցը՝ 4 տարեկան Նժդեհ Աբրոյանը, պարգեւատրվել է խրախուսական մրցանակով:

Երկրորդ տարիքային՝ մինչեւ 14 տարեկանների խմբում հաղթող է ճանաչվել Մարտունի քաղաքը ներկայացնող Գրիշա Շահումյանը: Երկրորդ մրցանակային տեղը զբաղեցրել է Վարդենիկի կրթահամալիրի սան Արսեն Մովսիսյանը, երրորդ տեղը՝ նույն կրթահամալիրի սան Ալեն Գրիգորյանը:

Երրորդ՝ 14 տարեկանից բարձր խմբում առաջին տեղը զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի ներկայացուցիչ Սաղաթել Թադեւոսյանը, 2-րդ տեղը Սեւան քաղաքը ներկայացնող Լեւոն Վարդանյանը, երրորդ տեղը՝ Վարդենիկի կրթահամալիրը ներկայացնող Արտյոմ Գրիգորյանը:

-Մրցաշարը հովանավորել է Կորյուն Հովհաննիսյանի որդին՝ Կարեն Հովհաննիսյանը: Մրցավարները եւ կազմակերպիչները, դպրոցի տնօրենը, հատուկ շնորհակալություն հայտնեցին Հովհաննիսյաններին: Մրցաշարը դարձել է ավանդական, ուսանելի եւ շահեկան,- ներկայացրեց Ժորա Ղումաշյանը:

**Խոսրով Խլղաթյան**

## ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցում տեղի է ունեցել հայ նշանավոր կոմպոզիտոր, դաշնակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանի ծննդյան 105-ամյակին նվիրված միջոցառում:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառմանը ներկա են եղել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ծնողներ, հյուրեր:

Միջոցառման ընթացքում հնչել են մեծանուն արվեստագետի անմահ ստեղծագործությունները, որոնց միջոցով մասնակիցները եւս մեկ անգամ արժեւորել են նրա անգնահատելի ավանդը հայ երաժշտական մշակույթի զարգացման գործում:

-Առնո Բաբաջանյանը՝ հայ երաժշտության լուսաշող նվիրյալը, թողել է ստեղծագործական գեղեցիկ ժառանգություն, որն այսօր էլ ապրում է ու շարունակում ոգեշնչել ապրողներից: Նրա մեղեդիներում կա եւ՛ հայրենասիրություն, եւ՛ սեր, եւ՛ մարդկային հոգու անկեղծություն: Նրա ստեղծագործական ողջ ժառանգությունը հայ հին ու նոր երաժշտության հանճարեղ համադրությունն է, որն ապրում է մեր հոգիներում ու կապրի գալիք դարերի մեջ: Այս միջոցառումն էլ ստացված ու յուրօրինակ հարգանքի տուրք էր մեծանուն հայ երգահանի հիշատակին ու թողած ստեղծագործական ժառանգությանը,-ներկայացրեց Վարդենիս համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը:

**«Գեղամա աշխարհ»**



## ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՍԱՆ ՈՒ ԳՐՈՂ ՊԱՀԱՐԵՆ



Պահարեն՝ Հայկ Սեդրակի Պետրոսյանը, հայ նշանավոր դերասան է, բանաստեղծ եւ գրող: Նրան նաեւ Վրաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչում է շնորհվել 1943 թվականին: ԽՍՀՄ գրողների միության շարքերն է ընդունվել 1934 թվականից:

Պահարեն ծնվել է 1895 թվականի փետրվարի 15-ին, Նոր Բայազետում (ներկայիս Գավառ քաղաքում):

Վաղ հասակից տեղափոխվել է Թիֆլիս, սովորել Ներսիսյան դպրոցում, կրթություն ստացել նաեւ նկարչական ակադեմիայում:

Խաղացել է Հայոց դրամատիկական թատրոնում, աշխատել Բաքվի հայկական թատրոնում, իսկ երկար տարիներ՝ Թբիլիսիի Ստեփան Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոնում:

Ավելի քան 50 տարվա ստեղծագործական ուղու ընթացքում մարմնավորել է շուրջ 300 դեր: Խաղացել է Լեւոն Քալանթարի, Հովհաննես Աբելյանի, Օլգա Մայսուրյանի, Ժասմենի, Վահրամ Փափազյանի, Հասմիկի, Սիրանույշի եւ այլ նշանավոր դերասանների հետ՝ դասվելով հայ թատրոնի տաղանդավոր կոմիկ դերասանների շարքը:

Միաժամանակ զբաղվել է գրականությամբ՝ հեղինակելով «Գյուղերի կանչը», «Գեղարքունիք», «Հայրենիք» ժողովածուները, «Կոմերիտ Վաղոն» պոեմը եւ «Չաղ-չաղ թագավորը» պիեսը:

1966–1968 թվականներին ապրել է Երեւանում, որտեղ էլ մահացել է՝ 1968 թվականի նոյեմբերի 1-ին:

Թաղված է հայրենի Գավառ քաղաքի գերեզմանատանը:

Պահարեն մնացել է հայ մշակույթի պատմության մեջ որպես տաղանդավոր արվեստագետ, ով իր անթաքույց հանճարով ով ծառայել է թատրոնին եւ գրականությանը:

**Ալվարդ Մանուկյան**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԵԼ Է 1712 ԴԻՄՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների եւ բողոքների թիվը կազմել է 1712, որից 145-ը վերահասցեագրվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմից:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, 1 712 դիմումներից բավարարվել է 1178-ը, մերժվել 111-ը, վերահասցեագրվել է 77-ը, 346-ին տրվել է պարզաբանում: Գեղարքունիքի մարզպետի, մարզպետի տեղակալի, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի եւ ստորաբաժանումների ղեկավարների կողմից կատարվել է 1021 քաղաքացիների ընդունելություն, որոնցից 315-ը՝ Գեղարքունիքի մարզպետի կողմից: Յուրաքանչյուր ամիս ՀՀ Վարչապետի աշխատակազմ եւ լիազոր պետական մարմին է ուղարկվել տեղեկատվություն քաղաքացիների ընդունելության, քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների եւ բողոքների թվի, բնույթի եւ ընթացքի վերաբերյալ: Գրանցվել է թեժ գծով ստացված 44 հեռախոսազանգ:

2025 թվականին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ է մուտքագրվել 22835 մտից գրություն, 5205 ներքին փաստաթուղթ, կազմվել եւ առաքվել է ելից 11153 գրություն:

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՆ 386 ՈՒՍՈՒՑԻՉ

Գեղարքունիքի մարզում 2025 թվականին պարտադիր ատեստավորման համար վերապատրաստվել են 386 ուսուցիչ, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատություններից՝ 36 մանկավարժական աշխատողներ եւ դաստիարակի 50 օգնականներ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, միաժամանակ աճում է կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը: Եթե 2024 թվականի տարեսկզբին մարզային ենթակայության դպրոցներում աշխատել են 266 կամավոր ատեստավորված ուսուցիչներ, որոնք տարվա ընթացքում ստացել են 342 միլիոն 224 հազար 400 ՀՀ դրամ հավելավճար, ապա 2025 թվականի տարեսկզբին արդեն նրանց թիվը հասել է 439-ի, որոնք տարվա ընթացքում ստացել են 616 միլիոն 929 հազար 960 դրամ հավելավճար: 2025 թվականի նոյեմբեր ամսին իրականացվել է կամավոր ատեստավորման գործընթացը, որին հայտագրվել են 494 մանկավարժ: 2025 թվականին Գեղարքունիքի մարզի դպրոցներում տարակարգ ստացած ուսուցիչների թիվն աճել է 24-ով՝ 68-ից հասնելով 92-ի, որոնց ստացած հավելավճարը կազմել է 25 միլիոն 571 հազար 500 դրամ:

2025 թվականին մարզային ենթակայության 44 դպրոցների 59 ուսուցիչներ ստացել են ամսական 400000 դրամ եւ ավելի աշխատավարձ:

## ՌՈՒԶԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ



**/սկիզբը՝ նախորդ համարում/**

Աղունը լսել է, որ քաղաքում լույսերը վառվում են, արդուկն օգտագործվում է, տունը տաքացվում է վառարանով, ռադիոն աշխատում է, սակայն հաշվիչը չի հաշվում, մի բան են անում՝ էդ բոլորը լինում է անփող: Նրա ինքնաբուխ մղումը դեպի քաղաքային օրեցօր լուսավորվող կյանքը, գտել է գեթ մեկ դրսեւորում՝ որդին կրթվել եւ ապրում է քաղաքում եւ «ժուռնալիստական գիծն է զարգացնում»:

Աղունի եւ Ծմակուտի բնակիչների բախումների պատճառներից մեկն էլ անհատի եւ նոր միջավայրի անդամների աշխարհայացքների խորն ու առանցքային տարբերություններն են: Աբելի ընտանիքը մեծ է, աշխատողները շատ, սպառողները՝ նույնպես: Սակայն այդ ընտանիքը առաջ է մղվում ապրելու եւ ոչ թե ապրուստի միջոցներով ուրիշներից զանազանվելու կամ քաղաքին նմանվելու հոգսով: Այդ է պատճառը, որ մեծ ընտանիքը ապրում է համեստ հարկի տակ՝ ինչպես տարիներ առաջ եւ շարունակում է ճաշ եփել, հաց ուտել, լվացք անել, քնել ու արթնանալ, խոսել ու խնդալ մի սենյակի մեջ՝ մեծով, փոքրով, որդիներով, դուստրերով եւ հարսներով: Այս հանգամանքը հեռավոր եւ ամուր արմատներ ունի. «Նահապետական գերդաստանն իր կազմով ու կառուցվածքով սերտ ազգակցությամբ եռասերունդ կամ քառասերունդ ընտանիքների համախմբումն ու միավորումն էր մեկ տան մեջ»: Աբելի ընտանիքը հատկանշական է հենց նահապետական վարքուբարքով, կարգուկանոնով, ինչի հետ Աղունը միանգամից հաշտվել չի կարող: Աղունի սիրտը պայթում է, երբ ընտանիքի անդամները ուտում ու ծիծաղում են, բայց նրանց կերածը շատ համեստ կերակուր է, համագյուղացիներին հեգնում ու ծիծաղում են, բայց իրենք էլ նրանց պես մարդիկ են: Լավ ապրելու հոգսը Աղունի մեջ ձեւավորվում-հասունանում է առաջնային նպատակի նման եւ նա ամեն ջանք ու եռանդ ներդնում է, պայքարում է իր երիտասարդության, իր առողջության, իր ու Սիմոնի միջեւ այդպես էլ չձեւավորվող ջերմության գնով՝ հանուն ապրուստի, հանուն նյութական բարեկեցության: Քարը քարի վրա է դրվում, գլխներին ծածկ է հայտնվում, օջախում մի նոր ձեռքբերում՝ կռվով, ծեծով ու արցունքով. Սիմոնն աղում է կնոջ կողերը:

Այլ է Սիմոնի բնույթը.նրա մեջ չարություն չկա, «վրեժ չկա», նա, պարզապես, Աղունի շտապողականությունը չունի, նրա կյանքում կենցաղը՝ սովորական կենցաղ, իսկ ամեն օրը սովորական օր է, եւ ամենեւին էլ ճշգրիտ հաշվարկով կազմակերպվող ընթացք չէ, ստույգ նպատակադրում չէ, ապագայի նախագիծ չէ: Աղունին տանջում, հավասարակշռությունից հանում է Սիմոնի դանդաղկոտությունը, աշխարհի հետ համերաշխությունը, գոհությունը կյանքից: Նա է տնօրինում ամուսնու ստեղծածը, եւ կտրատվում է, եւ բացատրում-բարձրաձայնում է ջղերի քայքայումով, որ կարող էր շատ լինել, բայց քիչ է, որ սեփական խոտն ավելի կարեւոր է, քան պետականը, սակայն կյանքն ընթանում է իր բնականոն հունով, Սիմոնն էլ՝ կյանքի հունով: Սիմոնն ապրում է առաջվա նման, առավելագույնը, որ շահում է Աղունը, իր ստեղծած տունն ու տեղն է, իսկ մնացյալը կորսված ժամանակն է, քայքայված ջղերը, գլխի ցավը եւ ափսոսանքը, որ պայքարը իզուր եղավ եւ ժամանակն այդպես էլ լավ չապրվեց.«Աղունը ներքին անհանգիստ մղումով փորձում է ծմակուտյան ժամանակին նոր ընթացք ու արագություն հաղորդել, - իրավացիորեն նկատում է Վ. Գրիգորյանը, - նա այլ կերպ չի պատկերացնում գոյության իմաստը: Բայց դա իրեն հաջողվում է միայն սեփական ապրումների աշխարհում, իսկ միջավայրի վրա նրա ունեցած ազդեցությունը չնչին է»:

Աղունին բնորոշ են սառը դատողությունն ու հաշվենկատությունը: Այս մտքի արտահայտություններից մեկը Աղունի եւ Սիմոնի երկխոսությունն է այն մասին, թե իրենց մի պարտատերը քաղաքում ոչխար կծախի, պարտքը կմարի: Այդպես է մտածում Սիմոնը, իսկ Աղունը ամուսնուն հորդորում է կշռադատել՝ Կիրովականում ոչխար ծախողը փողը կբերի՞, կհասցնի՞ Ծմակուտ, եւ տարակուսած ամուսնուն ինքն էլ պատասխանում է, որ չի բերի՝ «խելք կառնի, չիթ կառնի եւ կոշիկ»:

Եթե ամուսինները փողի հետ կապված գործ են ունենում, ապա Աղունը համարձակորեն հետաքրքրվում է դրամի քանակի, ավել-պակասի մասին: Երբ հարցը Արմենակի քաղաքային կյանքի հաջողություններին է վերաբերում, նա Սիմոնին կազմակերպված ու գործնական խորհուրդներ է տալիս. «Մի ոչխար մորթիր... Զանգ տուր Երեւան, ասա՝ իմ Արմենակի ընկերներն եք... մի ավտո լցվեք, եկեք... Մտիր խանութ մի երկու կոնյակ-լիմոնադ առ, տար դիր աղբյուրի ջրում: Թող գան ուտեն, հացը ճամփա է բացում, Սիմոն»:

Աղունի խոսքերը վկայում են ազնիվ բարեկամությունից դեպի սեփական շահի գիտակցություն եւ մարդկային առնչություններից դեպի դրամական-դրամատիրական փոխգործակցություն ընթացող հարաբերությունների մասին, ինչի հետեւանքով էլ փոխվում է մարդկային դիմագիծը, անցյալի մարդն իր տեղը զիջում է ներկայի մարդուն, հին որակներին փոխարինում են նոր որակները: Նշված հատկանիշներով Աղունը դառնում է նոր ապրելակերպի կրողը՝ վերստին հակադրվելով իր միջավայրին:

Սիմոնի մեջ ամփոփված է գյուղական մաքուր, անաղարտ, մարդու հանդեպ անսասան հավատով առլեցուն անհատը: Նրա մտահայեցությունը չի արատավորվել նորամուտ առուծախի, խաբեության, մոլության ու մոլորության բավիղներում: Նրա ընթացքը հանդարտ է եւ ուղղագիծ, ծանրաբեռնված դժվար ու նվիրված աշխատանքով եղբոր ու ընկերոջ համար, պետության համար, տունդարձից հետո՝ տան համար: Տան գործը հատկապես դժվար է, քանի որ չի վարձատրվում կնոջ սիրով, ժպիտով, ջերմությամբ, պատահում է եւ հաճախ, որ փոխադարձվում է հանդիմանությամբ, դիմադրությամբ, մոլեգին քննադատությամբ:

Սեփական խաղաղ ընթացքը Սիմոնին հանգեցնում է խղճի հանգստության եւ ներքին աշխարհի հետ՝ անտագնապ հարաբերությունների:

Աղունի հետ այդպես հարաբերվել չի հաջողվում: Սիմոնն անցյալում փոքրիկ շեղում է թույլ տվել՝ նայելով Մայայի կողմը: Ժամանակը վաղուց պարպել է այդ հուշը, բայց Աղունը՝ ոչ. «-էդ ինչի՞ չկերար, փափուկ ձվածեղ չէր՝ դրա համար չկերար, - ժպտալով, հեգնանքով եւ իրենց երկուսին հայտնի մեկի նկատմամբ իր գերազանցության զգացումով ասաց նա: - Հենց ապրե՛ս, - իր անկյունում խնդրեց Սիմոնը, - խնդրում եմ: Բայց Աղունը չխնայեց. - Գնամ Երեւան գամ՝ քեզ համար փափուկ ձվածեղ եմ անելու: Իր անկյունում Սիմոնն ավելի խեղճացավ»:

Եթե Սիմոնի անցյալի մեղքերի համեմատությամբ Աղունի «գետը պարզ, պարզ է», ինչպես Աղունն է պնդում, ապա միանգամայն պարզ ու պարզ է Սիմոնի ողջ կյանքը, բարոյական նկարագիրը: Սիմոնը մարդկայնորեն ազնիվ է, մեծահոգի է եւ ներողամիտ:

Սիմոնի՝ գործնականությունից փոքրինչ հեռու, դանդաղընթաց կենսակերպը բնությունից է գալիս, այդ պատճառով էլ երբեւէ շեղումների հանդիպելիս նա անակնկալի է գալիս՝ չգտնելով իրավիճակին հարմար, պատշաճ ասելիք անգամ. «Սիմոնը տնքալով թիկնեց մութաքաներին եւ խուլ ու հոգնած ասաց՝ Արմենը գա, մի բան կմտածենք: Ու այդպես էլ քնեց մութաքաների վրա»: Այդ օրը ընտանիքի դուստրը պատմության ուսուցչի հետ փախել էր Կիրովական:

Սիմոնն ապրում է, ոչ թե պայքարում, լուռ աշխատում է եւ կռիվ չի տալիս եւ ստեղծվելիքը ստեղծվում, կուտակվում է համաչափորեն, ժամանակի հետ եւ ոչ մի անգամ չի ընկնում ժամանակից առաջ, փոքր-ինչ առաջ է ընկնում միայն Սիմոնի ուժից.«Եվ այդ ժամանակ նա նկատեց, որ խուրջինի իր հակը ամուսինը տանում է դժվար, ծալված, մեռնելով, իսկ Ադամի ձեռքին կարծես բեռ չկար... Հետո ամուսինը կարծես փախավ այդ բեռից, կողքի-կողքի գնալով՝ նա հասավ կոճղին, բայց կոճղը չէր գտնում, նստելու տեղը չէր գտնում»:

Ծմակուտյան միջավայրի լիարյուն, ամբողջական հոգեկերտվածքը Մաթեւոսյանը ներկայացրել է ընտանիքի մեծ մոր՝ նանի կերպարի միջոցով: Նանը Հ. Մաթեւոսյանի այն հերոսներից է, որոնք հանդիսանում են իրենց միջավայրի ավանդական վարքուբարքի, բարոյականության կրողը:

Նանին բնորոշ է սիրել կարողանալը, խաղաղությունը, հանդուրժողականությունը, սեփական ցավը սեփական ատամի տակ պահելու շնորհքը.«...Նա դարավոր սովորույթների կրողն է, - նկատում է Վ. Գրիգորյանը, - անառարկելի՝ իր ծանրակշիռ բնավորությամբ»: Նրա սերն ու խինդը, հոգսն ու ցավը իր ընտանիքի, ամուսնու եւ զավակի, նրանց աշխատանքի ու հացի հետ է կապված: Նանի առաքելությունը օջախի մայր, սիրող կին լինելն է: Նրա տունը տքնաջան աշխատանքով, սակայն սիրով է կառուցված. «Ամեն կին իր ամուսնու համար պետք է սեր լինի, - ասում է նա, - Աբել ապին հնձից, գոմերից, ձմռան փայտատեղից ինչքան եկել է՝ ես նրան տաշտակի մեջ եմ դրել ու տաք ջրով, գոլ ջրով լողացրել եմ: Սիմոնս քեզանից սեր չտեսավ»: Նանը նաեւ Ծմակուտի հոգեւոր ժառանգության, նրա դարավոր արժեհամակարգի փոխանցողն է:

Մեկ ուրիշ միջավայրի ծնունդ է Արուսը. «Իմ տղերքին ես տվել եմ առողջություն եւ մի ձեռք անկողին... իզուր եմ տվել: Ի՞նչ է եղել – աշխարհը լեն, որ կողմ նայում ես՝ ապրուստ ու կյանք է թափած: Դու ծիծաղելու սիրտ ուզիր»:

**/շարունակելի/**

**Ռուզան Վարդանյան**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 26 ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ



ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի» կողմից 2024 թվականին հաստատված ծրագրի շրջանակներում արեւային ֆոտովոլտային կայաններ են տեղադրվում Գեղարքունիքի մարզի հանրակրթական 26 դպրոցներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ տարբեր հզորությունների արեւային ֆոտովոլտային կայաններ են տեղադրվել Գանձակի թիվ 2, Գեղարքունիքի, Ծովինարի, Սեւանի թիվ 1, Մեծ մասրիկի, Ծաղկունքի, Մարտունու թիվ 2, Ծովագյուղի, Շողակաթի, Ծափաթաղի, Այրքի, Արեգունու, Թթուջրի, Ձիլի, Ջովաբերի, Այգուտի, Գեղամասարի դպրոցներում: Դրանց գումարային ընդհանուր հզորությունը կազմում է 498,310 կիլովատտ ժամ: Այդ կայաններն արդեն միացված են ընդհանուր ցանցին:

Ընթացքի մեջ են գտնվում Նորատուսի թիվ 2, Նորատուսի թիվ 3, Նորաշենի, Կարմիրգյուղի թիվ 1, Ճամբարակի թիվ 2, Լանջաղբյուրի, Կարճաղբյուրի, Ծովազարդի միջնակարգ դպրոցներում արեւային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքները, որոնց ընդհանուր հզորությունը շահագործումից հետո կկազմի 279,65 կիլովատտ ժամ:

**«Գեղամա աշխարհ»**

## ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ «ՅՈՒՆԻՎԵՐՍ ԱՐՏ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղի մշակույթի տան «Նկարչություն» եւ «Դեկորատիվ կիրառական արվեստ» խմբակների սաների աշխատանքները ներկայացվել են «ՅՈՒՆԻՎԵՐՍ ԱՐՏ» միջազգային մրցույթ-փառատոնում ու արժանացել մրցանակների:

Աշխատանքները ցուցադրվել են Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում, իսկ «Հայ- ռուսական» համալսարանի դահլիճում տեղի է ունեցել մրցանակաբաշխությունը:

Գանձակի մշակույթի տան սաներից Ալիտա Գեւորգյանի, Խաչիկ Հարությունյանի եւ Անգելինա Կարեյանի աշխատաքները արժանացել են 1-ին, Գագիկ Մկրտչյանի, Մարկ Դանիելյանի աշխատանքները՝ 2-րդ,Կարինա Գեւորգյանի, Նարե Պողոսյանի, Մանե Մանուկյանի, Ալիտա Մարգարյանի, Անահիտ Հովհաննիսյանի, Անի Մարտոյանի, Յուրա Մարտիրոսյանի, Լեւոն Թաթոսյանի աշխատանքները՝ 3-րդ կարգի մրցանակների:

Խմբակների ղեկավարներն են Անժելա Ալոյանը եւ Լիանա Թաթոսյանը:

**Ալվարդ Մանուկյան**



## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓԱՆՑԻԿ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը 2025 թվականին ապահովել է աշխատանքների լիակատար թափանցիկություն եւ հրապարակայնություն: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, 2025 թվականին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակվել է Գեղարքունիքի մարզպետի կողմից ընդունած 802, Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարների կողմից ընդունած 7729, Գեղարքունիքի մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունած 886 որոշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզպետի կողմից մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերի, մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի դիտարկման, պետական աջակցությամբ մարզում իրականացվող շինարարական տարբեր ծրագրերի, մարզային ենթակայության առողջապահական հիմնարկներ, կրթամշակութային հաստատություններ կատարած աշխատանքային այցերի, մարզպետի աշխատակազմում մարզպետի հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների, նիստերի, ուղերձների, մարզի խորհրդի նիստերի այլ բնույթի միջոցառումների լուսաբանման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում եւ ֆեյսբուքյան էջում հրապարակվել են 550 տեղեկատվական բնույթի նյութեր:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների, մարզային ենթակայության կրթական հաստատությունների տնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողների, ուսուցիչների, ՀՈԱԿ-ների աշխատակիցների թափուր պաշտոնների համալրման, շինարարական ծրագրերի իրականացման նպատակով մրցույթների հրապարակման, ինչպես նաեւ այլ բնույթի հայտարարությունների իրազեկման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակվել է 1545 հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային նշանակության հողատարածքների վարձակալման, դրանց աճուրդ-վաճառքի կազմակերպման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակվել է 53 հայտարարություն:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում եւ մարզի համայնքներում Գեղարքունիքի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունների անցկացման վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում եւ ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 24 նյութ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջի փոստի միջոցով ստացվել եւ պատասխանվել է քաղաքացիների կողմից ներկայացված 167 հարցման: Հրատարակվել է «Գեղամա աշխարհ» մարզային թերթի 25 համար: Գործարկվել է «Գեղամա աշխարհ» թերթի էլեկտրոնային տարբերակը:

Համագործակցություն է ծավալվել մարզային «Գեղամա» մեդիա հոլդինգի եւ հանրապետական տարբեր լրատվամիջոցների հետ:

**«Գեղամա աշխարհ»**

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԻ ԵՎ ՏԿ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից 2025 թվականին Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացված իրավական եւ մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերվել է 35 թերություն:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգման հարցերի վարչությունից, 2025 թվականին Գավառ, Մարտունի, Ճամբարակ, Վարդենիս եւ Սեւան համայնքներում իրականացված իրավական եւ վարչական հսկողության արդյունքում արձանագրված 35 թերությունների վերացման ուղղությամբ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից սահմանվել են ժամկետներ: Հայտնաբերված թերությունները քննարկվել են համայնքի ավագանու նիստերում եւ տրվել հանձնարարականներ՝ թերությունները շտկելու վերաբերյալ: Կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է լիազոր մարմին:

Նույն աղբյուրի համաձայն՝ 2025 թվականին Պետական կառավարման ակադեմիայի կողմից վերապատրաստվել են 1 համայնքի ղեկավար եւ ավագանու 17 անդամ, համայնքային 72 ծառայողներ:

Վարչական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ հեռավար եղանակով մարզպետի աշխատակազմից վերապատրաստվել են 5 աշխատակից:

2025 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստմանը մասնակցել են համայնքների հանրային կապերի 5 պատասխանատուներ:

Մարզի համայնքներում հայտարարվել են համայնքային ծառայության 63 մրցույթ, պաշտոնի են նշանակվել 32 համայնքային ծառայող: 31 հայտարարված մրցույթները չեն կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել է ՀՈԱԿ-ների տնօրենների 64 մրցույթ, որից կայացել է 22-ը, որոնց արդյունքում պաշտոնի են նշանակվել են 22 տնօրեն: 42 հայտարարված մրցույթ չի կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով:

2025 թվականի ընթացքում Սեւան եւ Գավառ համայնքներում անցկացվել են 19 համայնքային ծառայողների ատեստավորումներ, որոնց արդյունքում ատեստավորման հանձնաժողովի կողմից ընդունվել է որոշում՝ զբաղեցրած պաշտոններին համապատասխանելու վերաբերյալ:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ գործում են մարզի Գավառ, Սեւան, Ճամբարակ, Վարդենիս համայնքներում եւ Շողակաթ եւ Գեղամասար բնակավայրերում:

2025 թվականին մարզի համայնքներում քաղաքացիների սպասարկման գրասենյակների կողմից սպասարկվել է 42710 քաղաքացի:

2025 թվականին մարզի 5 համայնքներում կայացել է 55 ավագանու նիստ: Ընդունվել է 887 որոշում: 5 որոշում ուղարկվել է վերանայման, 1 որոշում ուժը կորցրած է ճանաչվել:

2025 թվականի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի եւ մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ 152 տնտեսվարողների հետ կնքվել են շինարարական աղբի աղբահեռացման պայմանագրեր, որոնց արդյունքում համայնքային բյուջեներ կմուտքագրվի 29 միլիոն դրամ:

**«Գեղամա աշխարհ»**

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ



Փետրվարի 11-ին կայացել է Սեւան համայնքի ավագանու 9-րդ նստաշրջանի 1-ին նիստը:

Ներկայացված օրակարգային հարցերի հաստատումից առաջ Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանն անդրադարձել է 2025 թվականին համայնքում իրականացված աշխատանքներին, գրանցված հաջողություններին:

9-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացվել են աշխատակազմի բաժինների պետերի կողմից:

Սեւան համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման եւ 5-ամյա զարգացման ծրագրի՝ 2025 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը Սեւան համայնքի ավագանին ընդունել է ի գիտություն:

Մեկ այլ որոշմամբ համայնքի ավագանին հաստատել է Սեւան համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Համապատասխան որոշումներով հաստատվել են համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված՝ «Սեւան համայնքի ավագանու՝ 2025 թվականի դեկտեմբերի 18-ի N 148-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Սեւանի համայնքապետարանի, համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների եւ Սեւանի բիզնես կենտրոնի 2025 թվականի գույքագրման արդյունքները հաստատելու մասին», «Սեւան համայնքի՝ 2026-2028 թվականների համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու եւ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի կողմից 2026 թվականի համար սուբվենցիոն հայտերին համաձայնություն տալու մասին», «Սեւան համայնքի Լճաշեն բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին», «Սեւան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով վաճառքի մեկնարկային գները սահմանելու մասին» որոշումների նախագծերը:

Համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանն անդրադարձ է կատարել համայնքում աղբահանության դիմաց գանձվող վարձավճարներին՝ նշելով, որ 2025 թվականի օգոստոսից համայնքում աղբահանությունն իրականացվում է «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի միջոցով:

-Աղբահանության հետ կապված դեռեւս կան խնդիրներ, մասնավորապես՝ աղբահանության դիմաց գանձվող վճարների մասով: Ֆիզիկական, իրավաբանական անձինք, տնտեսվարող սուբյեկտներն իրենց պարտավորությունները պետք է կատարեն ժամանակին եւ ամբողջապես, որն էլ համայնքի ներկայանալի տեսքի երաշխիքներից մեկն է,- նշել է համայնքի ղեկավարը:

Ավագանու նիստի ընթացքում քննարկվել են նաեւ համայնքի ավագանուն հասցեագրված դիմումները, զեկուցագրերը, որոնց մի մասին տրվել է սպառիչ պատասխան՝ համապատասխան որոշումների ընդունմամբ, որոշ դիմումներ էլ լրացուցիչ կքննարկվեն խմբակցություններում:

Համայնքի ավագանու 9-րդ նստաշրջանի 2-րդ նիստը տեղի կունենա մարտի 12-ին:

**Արմինե Ղուկասյան**

## ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԾՆՎԵԼ Է 105 ԵՐԵԽԱ

2026 թվականի հունվար ամսին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում ծնվել է 105 երեխա՝ 63 տղա եւ 42 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզի ծննդօգնության աջակցություն իրականացնող բուժհիմնարկներից, 56 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 11 երեխա՝ Վարդենիսի, 14 երեխա՝ Գավառի, 24 երեխա՝ Սեւանի բժշկական կենտրոններում:

Ճամբարակի առողջության կենտրոնում 2026 թվականի առաջին ամսին ծնունդ չի գրանցվել:

2025 թվականի առաջին ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնության աջակցություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 97 երեխա՝ 57 տղա, 41 աղջիկ:

**«Գեղամա աշխարհ»**



ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692
https://geghama.am/

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 16. 02. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: